426

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան
« 17 » 01 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0007-23

Ձեռնարկողը՝ ***Քաղաքացի Ատոմ Մարտիրոսյան***
ք. Երևան, Մաշտոցի պողոտա 60 շ., բն 9

Գործունեությունը՝ ***Երևանի, Նորք-Մարաշ վարչական շրջանի, Գ. Հովսեփյան փողոցի, 26/15 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենքի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
ք. Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0007-23

<17> 01 2023թ.

Երևանի, Նորք-Մարաշ վարչական շրջանի, Գ. Հովսեփյան փողոցի, 26/15 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենքի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	Քաղաքացի Ատոմ Մարտիրոսյանին
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	ք. Երևան, Նորք-Մարաշ վարչական շրջան

Ներածական մաս. Բազմաբնակարան բնակելի շենքի նախագիծը նախատեսվում է իրականացնել Նորք-Մարաշ վարչական շրջանի Գ. Հովսեփյան փողոցի 26/15 հասցեում: Գործունեության նպատակն է կառուցել ժամանակակից բնակելի համալիր:

Գարեգին Հովսեփյան փողոցի թիվ 26/15 հասցեին պատկանող հողամասը գտնվում է ապամոնտաժված երկաթուղու տեղում կառուցված Նոր խճուղուն զուգահեռ ձգվող նոր կառուցված ճանապարհի մոտ, ազատ տարածքում: Հողամասը գտնվում է ճանապարհի եզրից 8,4 և 3,7 մետր հեռավորությունների ու համապատասխանաբար 7,6 և 2,4 մետր բարձրությունների վրա:

Հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ խառը կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նախատեսվող գործունեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 7)-րդ կետի ա. ենթակետի, հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Բնակելի համալիրի նախագծի մշակման համար հիմք է հանդիսացել 11.06.2007թ.-ին տրված անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի N2340302 վկայականը, 20.07.2022 թ.-ին տրված 01/18-07/1-Դ-23832-644 նախագծման թույլտվությունը, ճարտարապետահատակագծային առաջադրանքն ու պատվիրատուի առաջադրանքը:

Կառուցապատվող շինությունը բաղկացած է մեկ մասնաշենքից՝ ստորգետնյա հատվածում կիսանկուղային և նկուղային հարկերով, իսկ վերգետնյա հատվածում նախատեսվում է հինգ հարկ՝ հողամասի սահմանների թեքության ներքևի և վերևի հատվածներից դիտարկված:

Նկուղային հարկում նախատեսված է ավտոկայանատեղի, իսկ կիսանկուղայինում ավտոկայանատեղի և մասամբ հասարակական սպասարկման համար: Վերգետնյա հարկերը բնակելի են, տանիքները շահագործվող:

Շենքը նախատեսվում է իրականացնել միաձույլ երկաթբետոնե հիմնակմախքից, արտաքինից քարե և ապակյա երեսապատմամբ: Բնակչության սակավաշարժուն խմբերի համար շինարարական նորմերի պահանջներով նախատեսվել են թեքահարթակներ:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներ՝

Հողամասերի մակերես 2710,0քմ,

կառուցապատման մակերեսը 33% որը կազմում է 887,0քմ,

հարթ կառուցապատման մակերեսը 26% որը կազմում է 721,0քմ,

կանաչապատման մակերեսը 41% որը կազմում է 1102,0քմ,

ստորգետնյա կառուցապատման մակերեսը 80% որը կազմում է 2158,0քմ,

բնակարանների քանակը 61 բնակարան,

տերրասաների կանաչապատում 594,0քմ,

ավտոկայանատեղի 55 մեքենա:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումն իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Տարածքում կիրականացվի սիզամարգի ցանքս, կտկվեն ծառեր և թփեր: Կանաչապատ տարածքների ոռոգումն իրականացվելու է հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից:

Բնակելի շենքի խոհանոցներից, սանհանգույցներից և լողասենյակներից օդափոխությունը նախատեսված է բնական՝ օդատարներով, որոնք բարձրանում են հորանի մեջ:

Օդատարների վրա՝ յուրաքանչյուր հարկի առաստաղի տակ նախատեսված է կարգավորիչ ճաղավանդակ:

Ավտոկայանատեղիում նախագծված են մեխանիկական դրդմամբ ներածման և արտածման օդափոխության համակարգեր: Ներածման և արտածման համակարգերի սարքավորումները տեղադրված են հարկի առաստաղի տակ:

Օդափոխության համար օգտագործվել են կոմպակտ համակարգեր, որոնք անհրաժեշտության դեպքում կարող են փոխարինվել նույն պարամետրերով, այլ համակարգերով: Ներածումն ու արտածումը կատարվում է կարգավորող ճաղավանդակների միջոցով:

Շենքի բնակելի մասի միջանցքներից և ավտոկայանատեղիներից իրականացվում է ծխահեռացում: Ծխահեռացման օդամուղները տեղակայված են տանիքի վրա:

Հրդեհի ժամանակ վերելակների հորաններում և ավտոկայանատեղիի վերելակների հորանի և աստիճանավանդակի նախասրահներում նախատեսված են դիմհարման համակարգեր:

Հակահրդեհային օդամուղների գործարկումը կատարվում է հրդեհային ազդասարքից և հեռակա կենտրոնական վահանակից: Ավտոկայանատեղիներում նախատեսված է ներածման և արտածման մեխանիկական համակարգեր: Արտածման համակարգերը համակցված են ծխահեռացման համակարգերի հետ: Ստորգետնյա ավտոկայանատեղիներում յուրաքանչյուր հարկի համար օդափոխման համակարգն առանձին է: Օդափոխությունն իրականացված է վնասակար գազարտանետումների նոսրացման և հեռացման համար:

Բնակարաններում օդի արտածումն իրականացվում է սանհանգույցներից և խոհանոցներից իսկ ներածումն իրականացվում է պատուհանների միջոցով: Սանհանգույցներում

նախատեսված են առանցքային օդամղիչներ: Խոհանոցներում նախատեսված են օդահեռացման երկու առանձին համակարգեր, մեկը՝ բնական, մյուսը՝ մեխանիկական, որը միանում է գազօջախի վրա տեղակայված քարշիչ պահարանին:

Ջերմության խնայողության համար ընտրված են օդի ներածման համակարգեր, որոնք ապահովում են ջերմության բարձր խնայողություն:

Օբյեկտի ընդհանուր կոմպլեքսի շինարարության նորմատիվ տևողությունը ծրագրվում է 22,0 ամիս շինարարական աշխատանքների կատարման համար թույլատրման տրամադրման օրվանից:

Մասնաշենքերի միացումն արտաքին ինժեներական ցանցերին, ինչպես նաև շենքերի, ավտոճանապարհների, հրապարակների և մայթերի կառուցումը կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունը կարելի է իրականացնել ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, վարձակալել դրանք այլ կազմակերպություններից:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի ձեռանարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շաղախը և բետոնը կառաքվեն Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

- Առանձին ամրանային ձողերն ու հիմնակմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերը ավտոմոբիլային փոխադրամիջոցներով բերվում են անմիջականորեն շինարարական հրապարակ, որտեղ կատարվում է դրանց պահեստավորում և տեղադրում:
- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով:

Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ եւ այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ և կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր և այլն: Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի և ստացվող ավազի ու խճի խոնավեցման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար:

Շինարարությունում աշխատողների ընդհանուր թիվը 50 մարդ, որից ինժիներատեխնիկական անձնակազմ - 8 մարդ:

Բազմաբնակարան բնակելի շենքի ջրամատակարարումն ու ջրահեռացումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի միանալով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ ցանցին: Ջրամատակարարումն իրականացվելու է Գ. Հովսեփյան փողոցով անցնող d=500մմ ջրատարից, իսկ կոյուղին Սարալանջի փողոցով անցնող d=300մմ կոյուղատարին, հեղեղատարը սարալանջի փողոցով անցնող d=300մմ հեղեղատարին:

Շինարարության փուլում ջրցանման համար անհրաժեշտ ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով, Երևան քաղաքի ոռոգման ջրի ցանցից: Խմելու ջուրը կմատակարարվի տարաներով: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովվեն տեղադրելով բիոզուգարաններ:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի: Նախատեսվում է նոր ենթակայանի կառուցում:

Գազամատակարարումը 214 խմ/ժամ նախատեսվող ծախսով համաձայն տեխնիկական պայմանի կիրականացվի Ջրվեժ ԳԲԿ սնող D=300մմ կողմնատար գազատարից:

Համալիրում նախատեսվում է իրականացնել անհատական օդափոխման և ջեռուցման համակարգ որոնց արտաքին բլոկները նախատեսվում է քողարկել հատուկ դրանց համար նախատեսված խորշերում և համապատասխան ձայնամեկուսիչ նյութերի օգտագործմամբ: Նախատեսվում է ապահովել աղմուկի ցածր մակարդակ:

Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 7580խմ ընդհանուր ծավալով փորման աշխատանքեր: Հանվող 6500խմ ծավալով զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր, մնացած մասը՝ կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք:

Տարածքում բնության և պատմամշակութային հուշարձաններ չկան: Ծառաթփային բուսականությունը բացակայում է:

Շինարարական աշխատանքերի ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը /ծածկագիրը՝ 9120040001004/՝ 6.6 տ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, և 80խմ շինարարական աղբը /ծածկագիրը՝ 9120060101004/, ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հողը (ծածկագիրը՝ 31401100 08 99 5) 6500խմ ծավալով, կտեղափոխվի շինարարության թույլտվությամբ տրամադրված վայր:

Տեղանքում չկան որևէ էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանական տեսակներ, բնության և պատմամշակույթային հուշարձաններ:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

-շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,

- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորում,

- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականցվի փակ ծածկով մեքենաներով,

- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը,

-շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,

- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,

- կանաչապատումն իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի,

- հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում նախատեսվում է հրշեջ հիդրանտի տեղադրում:

-շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,

- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:

Բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները.

- Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ անգամ հաճախականությամբ:
- Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ:
- Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
- Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարության ընթացքում հատկացնել 1660000 դրամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով, բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման վերաբերյալ իրականացվել են հանրային քննարկումներ Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանում, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, ինչպես նաև քաղաքաշինության և կադաստրի կոմիտեները: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
- Անհրաժեշտ է ապահովել ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի 44-րդ աղյուսակով և 448-րդ, 449-րդ, 450-րդ կետերով սահմանված պահանջները (անցումներ և հեռավորությունն անցումի եզրից մինչև շենքի պատը):
- Անհրաժեշտ է հայտում նշված հողամասի առնվազն 41%-ն ապահովել որպես կանաչապատման տարածք:

Կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համաձայն՝ պահպանելով շինհրապարակի աշխատանքային անվտանգության կանոնները, բանվորների արտահագուստի և հիգիենայի պահանջները:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ քաղաքապետարանի հետ համաձայնեցված:

- Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N438 որոշման 43-րդ կետի՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումն ու լիցքավորումն անհրաժեշտ է իրականացնել շինհրապարակից դուրս մասնագիտացված կետերում: Տարածքում քսայուղեր և վառելանյութ չպահեստավորել:

-Կառուցապատման աշխատանքների ժամանակ՝ ՀՀ Օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանել արտանետվող փոշու և առաջացող աղմուկի ու թրթռումների թույլատրելի մակարդակը:

-Հետիոտների անվտանգությունն ապահովելու նպատակով շինհրապարակն անհրաժեշտ է ցանկապատել թիթեղով, մարդկանց անցման հատվածներում անվտանգության նկատառումներով պայմանավորված նախատեսել թիթեղյա ծածկոց:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Քաղաքացի Ատոմ Մարտիրոսյանի կողմից ներկայացված Երևանի, Նորք-Մարաշ վարչական շրջանի, Գ. Հովսեփյան փողոցի, 26/15 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝ Հովիկ Մեսրոպյան